ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/28** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2018 թվականի մայիսի 3-ին** կնքված N **ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/28-2** ծածկագրով պայմանագրում **2019 թվականի նոյեմբերի 29-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետի փոփոխությամբ պայմանավորված՝ նոր վճարման ժամանակացույցի հաստատում:

Փոփոխության նկարագրություն N 1: Պայմանագրի 2-րդ չափաբաժնի մասով ծառայությունների մատուցման դիմաց վճարման նոր ժամանակացույցի հաստատում:

Փոփոխության հիմնավորում N 1: ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1082-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետ և պայմանագրի 7.5-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Սողոմոնյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ a_soghomonyan@mincult.am:

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆՈՐՈԳՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/28-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» «11» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սեյսմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Բունիաթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով կողմերի միջև 2018 թվականի մայիսի 3-ին կնքված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի նորոգման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման N «ՀՀՄՆ-ԳՀԾՁԲ-18/28-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-N որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը թույլտվություն տալու մասին» N 1082-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը՝ Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Հաստատել 2-րդ չափաբաժնի մասով ծառայությունների մատուցման դիմաց վճարման նոր ժամանակացույցը համաձայն թիվ 1 հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնաց Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011018927 ՀՎՀՀ 02698732	«Սեյսմշին» ՍՊԸ ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փող. 21/3ա «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, «Սպանդարյան» Մ/Ճ Հ/Հ 163048109645 ՀՎՀՀ 04227903
Գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյան (ստորագրություն) Կ.Տ	Տնօրեն՝ Ն. Բունիաթյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված թիվ 1
«29» «11» 2019 թ. կնքված
N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2019թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում*	
			Դեկտեմբեր, մինչև 30-ը	Ընդամենը
2	71351540/8	ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի Դվին հնավայրի միանավ եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	198000	198000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ն. Բունիաթյան
(ստորագրություն)

Կ.Տ